ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» ապրիլի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մովսեսյան ՍՊԸ-ի, Միկրորինգ ՍՊԸ-ի, ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ-ի, Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ-ի, Կոմպասս ՍՊԸ-ի և Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. Մովսեսյան ՍՊԸ-ի, Միկրորինգ ՍՊԸ-ի, Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

1-ին, 2-րդ, 3-րդ, 15-րդ չափաբաժինների մասով **Մովսեսյան ՍՊԸ-ի**, 4-րդ չափաբաժնի մասով **Միկրորինգ ՍՊԸ-ի**, 13-րդ չափաբաժնի մասով **Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ի** կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

2.2. ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ լրացված չեն նշված հայտարարագրի «4.8. Իրական շահառուի կոնտակտային տվյալները» ենթաբաժնի «4.8.1. Էլ. փոստի հասցեն» և «4.8.2. Հեռախոսահամարը» դաշտերը:

Միաժամանակ վերոնշյալ հայտարարագրի՝ «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ.

- 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.3. Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.2) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ հիշյալ հայտարարագրում Հավելված 1.2-ին վերաբերող տեղեկատվության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգը՝ «Էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերի փոխարեն նշված է «գնանշման հարցման հրավերի» բառերը.

- 9-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.4. Կոմպասս ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- Հայտարարագրի «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին» դաշտում Հայտարարագրի ստորագրման ամիսը նշված է ոչ ամբողջական.
- հրավերին կից ներկայացված՝ հայտարարագրի լրացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի 3)-րդ ենթակետով սահմանված է, որ «Վերահսկողության մակարդակը» ենթաբաժինը լրացվում

է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացվել են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձին վերաբերող տվյալները: Մասնակցի հայտով ներկայացված հայտարարագրի «2.3. Վերահսկողության մակարդակը» ենթաբաժնի «2.3.2. Մասնակցության տեսակը» դաշտում կատարված է նշում, այն դեպքում, երբ Հայտարարագրի 2.1. ենթաբաժինը լրացված չէ:

Միաժամանակ Հայտարարագրի՝ «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ, ինչպես նաև Հայտարարագրի հավելվածի համարը նշված է «N 1.3», այն դեպքում, երբ հրավերով իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը սահմանված է N 1.2 հավելվածով.

- 10-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. ապրիլի 28-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետի պահանջներով՝ հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած համապատասխան մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **ապրիլի 27-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան